

ՓՈՒԽՎՈՐՈՒՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

«ՎՈՐԼԴ ՎԻՇՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ»

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ

ԵՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ

ՄԻՋԵՎ

Ե Ր Ե Վ Ա Ն

2018թ.

ՓՈՒՆԸՄԲՈՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

«01» հոկտեմբերի 2018թ.

ք. Երևան

Հայաստանի Հանրապետություն

«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը (այսուհետ՝ ՎՎՀ), ի դեմս Ծրագրի տնօրեն ժիրայր Էդիլյանի, մի կողմից,

և

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանը (այսուհետ՝ Գործընկեր), ի դեմս ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Գնել Սանոսյանի, մյուս կողմից, (երկուսը միասին՝ Կողմեր), հաշվի առնելով, որ՝

ա) ՎՎՀ-ն նպատակ ունի աջակցել ՀՀ Գեղարքունիքի մարզի համայնքներին, համայնքաբնակ ընտանիքների կենսամակարդակի բարձրացմանը և երեխաների՝ հատկապես առավել խոցելի խմբերի երեխաների, բարեկեցության ապահովմանը համապատասխան ծրագրերի իրականացման միջոցով,

բ) ՎՎՀ-ն բազմաթիվ երեխայակենտրոն ծրագրեր է իրականացնում Հայաստանում, որոնց հիմնական նպատակն է աջակցել ՀՀ Գեղարքունիքի մարզի համայնքներում բնակվող երեխաներին՝ զարգացման, կրթության և օրինական շահերի պաշտպանության հարցերում,

գ) Կողմերը մտադիր են սահմանել իրենց համագործակցության հիմնական պայմանները՝ կնքելով սույն Փոխըմունման հուշագիրը (այսուհետ՝ Հուշագիր) հետևյալի մասին.

ՀՈՂՎԱԾ 1. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

1.1 Նպատակ է Տարածքային ծրագրի (ՏԾ) իրականացվող համայնքներում բնակվող բոլոր երեխաների վաղ տարիքի զարգացմանն ու աճին՝ ծնողների,

խնամողների և խնամակալների, ծառայություն մատուցողների (կրթական, առողջապահական և շահերի պաշտպանության կառույցների) ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման միջոցով:

1.2 Հզորացնել երեխայի պաշտպանության մեխանիզմները և համայնքահեն ծառայությունները՝ երեխաների, մասնավորապես առավել խոցելի երեխաների և նրանց ընտանիքների համար ներդաշնակ ընտանիքներում, համայնքներում ապրելու հնարավորություններ ստեղծելով:

1.3 Աջակցել երիտասարդներին գիտակցելու իրենց իրավունքները, հոգատարություն ցուցաբերելու իրենց հասակակիցների և այլոց հանդեպ, ինչպես նաև դառնալու կարևոր դերակատարներ տարբեր ասպարեզներում, ինչպիսիք են՝ երեխայի պաշտպանությունը, առողջապահությունը, կրթությունը, խաղաղարարության, մարդու իրավունքներն ու ժողովրդավարական կառավարումը, աղքատության նվազեցումը, երիտասարդության զբաղվածությունն ու ներառումը, աղետների ռիսկերի նվազեցումը:

1.4 Սույն Հուշագրով նախատեսված համագործակցությունը ՎՎՀ-ն իրականացնելու Գավառի, Վարդենիսի և Ճամբարակի Տարածքային ծրագրերի (ՏԾ) իրականացման գրասենյակների միջոցով:

ՀՈԴՎԱԾ 2. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԸ/ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

2.1 Նպաստել առողջապահական ու նախադպրոցական ուսումնական հաստատությունների ծառայություն մատուցողների ինստիտուցիոնալ կարողությունների բարելավմանն ու զարգացմանը, մինչև 5 տարեկան երեխաներին մատուցող ծառայությունների որակը բարձրացնելու նպատակով, ինչպես նաև ծնողների ու խնամողների կարողությունները՝ դրական ծնողավարության մոտեցումները կիրառելու նպատակով:

1.1 Երեխաների Պաշտպանության դեպքերի հայտնաբերման և ուղղորդման մեխանիզմների բարելավման ու զարգացման միջոցով հզորացնել խոցելի երեխաների և նրանց ընտանիքների համար գործող համայնքահեն ծառայությունները, բարձրացնել ընտանիքների ու երեխաների սոցիալ-տնտեսական դիմակայունությունը:

1.2 Խթանել երիտասարդների տնտեսական և սոցիալական ներգրավվածությունը, ընդլայնել նորարար գաղափարների իրականացման և տնտեսական գործունեության մեջ ներգրավվելու հնարավորությունները:


ՀՈԴՎԱԾ 3. ԴԵՐԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ և ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

3.1 ՎՎՀ-ն պարտավորվում է Գեղարքունիքի մարզի Գավառի, Վարդենիսի և Ճամբարակի տարածաշրջանների՝ իր ծրագրերի տարածքում ներգրավված հիսունյոթ համայնքներում, իրականացնել համայնքների հետ քննարկված և հաստատված երեք ոլորտային ծրագրերը (Վաղ մանկության զարգացում, Երեխաների պաշտպանություն, երիտասարդությունը որպես զարգացման և խաղաղարարության շարժիչ ուժ)՝ համաձայն տեղական գործընկերների հետ կնքված համագործակցության հուշագրերի:

3.2 ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանը՝ իր ենթակա համապատասխան ստորաբաժանումների և կառույցների միջոցով, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով աջակցում է նշված ծրագրերի իրականացմանը:

ՀՈԴՎԱԾ 4. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԿՁԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԿԱՆՈՆՆԵՐԸ

4.1. Կողմերը համաձայն են, որ տեղական գործընկերների հետ կնքված հուշագրերում նշված գործողությունները կարող են ենթարկվել փոխադարձ վերահսկման՝ թե տեղական, թե մարզային մակարդակով:



- 4.2. Կողմերը համաձայն են, որ համաձայնեցված ծրագրերից հայտնաբերված որևէ շեղում և շտկում ենթակա է քննարկման, իսկ որոշումները կայացվում են համատեղ:
- 4.3. Կողմերը համաձայն են պարբերաբար հանդիպել և տեղեկատվություն փոխանակել առնվազն կիսամյակը մեկ անգամ:
- 4.4. Կողմերն ընդունում են յուրաքանչյուր Կողմի անկախությունը և կնքում են սույն Հուշագիրը փոխադարձ վստահության, հարգանքի և պատասխանատվության ոգով:
- 4.5. Սույն Հուշագիրը չի սահմանափակում որևէ Կողմի իրավունքը՝ համագործակցել մարդասիրական և զարգացման ծրագրեր իրականացնող այլ կազմակերպությունների հետ:
- 4.6. Սույն Հուշագրով նախատեսված գործունեության բարեհաջող իրականացումն ապահովելու նպատակով Կողմերը պարտավորվում են սերտորեն համագործակցել միմյանց հետ և համախմբել իրենց ջանքերը փոխադարձաբար համաձայնեցված միջոցառումների իրագործման միջոցով: Ծրագրերի իրականացման հետ կապված որոշակի պայմաններ կարող են սահմանվել Կողմերի միջև կնքված առանձին պայմանագրերով:
- 4.7. Կողմերը համաձայնվում են անմիջապես արձագանքել մյուս Կողմի առաջարկություններին:
- 4.8. Գործընկերը պարտավորվում է ապահովել իր ընդհանուր աջակցությունը տարբեր ծրագրերով նախատեսված միջոցառումների և գործողությունների կազմակերպման ընթացքում:
- 4.9. Գործընկերը պարտավորվում է ապահովել իր ընդհանուր աջակցությունը տարբեր ծրագրերով նախատեսված միջոցառումների և գործողությունների կազմակերպման ընթացքում:
- 4.10. Երեխայի պաշտպանություն. Գործընկերը պետք է ապահովի և կիրառի իր աշխատողների համար նախատեսված՝ երեխայի իրավունքների

պաշտպանության կանոնակարգը, որը նպատակ ունի նվազեցնել Շրագրում ներգրավված երեխաների նկատմամբ բռնության կամ օրինական շահերի ոտնահարման նախադեպերը: Գործընկերը պետք է ներկայացնի ՎՎՀ-ի վերանայման և քննարկման համար իր այն կանոնակարգերը և ընթացակարգերը, որոնք անմիջականորեն առնչվում են Երեխաների իրավունքներին, կամ եթե այդպիսիք գոյություն չունեն, պետք է ապահովեն ՎՎՀ-ի կողմից հաստատված Երեխաների իրավունքների պաշտպանության կանոնակարգի պայմանները: Գործընկերը սույնով հաստատում է, որ տեղեկացված են այդ կանոնակարգում նշված դրույթների մասին և կպահպանի ՎՎՀ-ի կողմից հաստատված Երեխայի իրավունքների պաշտպանության վերաբերյալ կանոնակարգի պահանջները, որոնք ներկայացված են սույն Հուշագրին կից Հավելված Ա-ում և Հավելված Բ-ում:

ՀՈԴՎԱԾ 5. ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5.1. Հուշագրի ժամկետը

Սույն Հուշագիրը գործում է այն բոլոր Կողմերի կողմից ստորագրելու պահից:

Սույն Հուշագիրը գործում է մինչև 2019թ. սեպտեմբերի 30-ը:

5.2. Հուշագրի վաղաժամկետ լուծումը

Կողմերից յուրաքանչյուրը կարող է վաղաժամկետ լուծել սույն Հուշագիրը, եթե մյուս Կողմը չի պահպանում Հուշագրի դրույթները: Հուշագրի վաղաժամկետ լուծման դեպքում յուրաքանչյուր նախաձեռնող Կողմ պարտավոր է նախապես գրավոր ծանուցել մյուս Կողմին առնվազն 30 (երեսուն) օրացուցային օր առաջ:

5.3. Հուշագրի փոփոխություններն ու լրացումները

Հուշագրում կատարվող փոփոխությունները և նոր համագործակիցների հավելումները քննարկվում և որոշվում են համատեղ:

Սույն Հուշագրի բոլոր փոփոխություններն ու լրացումները վավեր են, եթե դրանք կատարված են գրավոր ձևով, ստորագրված և կնքված են բոլոր Կողմերի կողմից:



5.4. Վեճերի լուծումը

Սույն Հուշագրի հետ կապված բոլոր վեճերը Կողմերը կփորձեն լուծել բանակցությունների միջոցով կամ այլ համաձայնեցված կարգով: Կողմերի միջև համաձայնության չհասնելու դեպքում վեճերը կլուծվեն համաձայն ՀՀ գործող օրենսդրության:

5.5. Հուշագրի օրինակները

Սույն Հուշագիրը կազմված է երկու իսկական օրինակից՝ մեկական օրինակ յուրաքանչյուր Կողմի համար, որոնցից յուրաքանչյուրն ունի հավասար իրավաբանական ուժ:

ՀՈԴՎԱՍԾ 6. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՎՎՀ՝	Գործընկեր՝
<p>“Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ” Միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ</p> <p>Հասցե՝ ՀՀ, Երևան 0065, Ռոմանոս Մելիքյան փող. թիվ 1</p>	<p>ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան</p> <p>Հասցե՝ ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7</p> <p>հեռ.՝ (+374264)21045, (+374 60) 650 612</p>
<p>Ծրագրի տնօրեն</p> <p>Ժիրայր Էդիլյան</p>	<p>Մարտին</p>  

Հավելված Ա

ԵՐԵՒԱՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐԸ
(ՎՎ Հայաստանի բոլոր դոնորների, հովանավորների, այցելուների, անհատական կապալառուների, և նույնիսկ այն անձանց համար, ովքեր երեխաների հետ առնչություն չեն ունենալու)

Սույնով ես հայտարարում եմ և հաստատում, որ կարդացել և հասկացել եմ ներքոհիշյալը, որը վերաբերում է ՎՎ Երեխաների պաշտպանության վարվելակերպի միջազգային կանոններին և «Հաղորդակցության ժամանակ վնասի կանխարգելմանը», չեմ ենթարկվել քրեական պատասխանատվության (այդ թվում՝ երեխաների հանդեպ բռնության, հետապնդման, մանկապղծության, երեխա աների պոռնոգրաֆիայի, բռնաբարության և այլնի համար) կամ չեմ ենթարկվել քաղաքացիական պատասխանատվության երեխաների պաշտպանության հարցերի հետ կապված: Ի հավելումս, հաստատում եմ, որ կհետևեմ երեխաների պաշտպանության ՎՎ-ի վարվելակերպի ստորև նշված պահանջներին/սահմանված ուղեցույցներին..


- արգելվում է դրսևորել անպատշաճ ֆիզիկական պահվածք, կամ երեխայի (18 տարեկանից ցածր) հետ սեռական հարաբերություն՝ անկախ տվյալ երկրում օրենքով թույլատրելի տարիքային սահմանաչափից
- արգելվում է շոյել, բռնել, համբուրել, գրկել կամ դիպչել երեխաներին անպատշաճ կամ տվյալ մշակույթին անհարիր կերպ
- արգելվում է կիրառել լեզվաարտահայտչական ձևեր, առաջարկել խորհուրդներ կամ առաջարկություններ, որոնք անպատշաճ են և զեղծարար, այդ թվում՝ արտահայտություններ, բառեր, որոնք ամոթալի են, ստորացուցիչ, կամ նվաստացնող ու վիրավորական
- արգելվում է երեխայի հետ մենակ, չափից դուրս երկար կամ անիմաստ ժամանակ անց կացնել՝ ուրիշներից հեռու կամ փակ դռների հետևում կամ առանձնացված տարածքում
- արգելվում է թույլ տալ կամ մասնակցել երեխաների հետ այնպիսի վարքի, որն անօրինական է, վտանգավոր և զեղծարար, այդ թվում՝ վտանգավոր ավանդական սովորույթների, հոգևոր և ծիսական բռնության
- արգելվում է վարձել երեխաներին որևէ տեսակի վարձու աշխատանքի՝ հատկապես, ՎՎ-ի անձնակազմը չպետք է վարձի երեխաներին որպես տնային օգնողների, եթե դա չի բխում երեխայի շահերից և չի համապատասխանում տեղական օրենսդրությանը և միջազգային չափանիշներին (Երեխաների վարձու աշխատանքը գործ է, որը ֆիզիկապես, մտավոր, հասարակայնորեն և բարոյապես վտանգավոր և վնասակար է երեխաների համար, կամ որը խանգարում է նրանց ուսուցմանը, երեխաների աշխատանքի մասին լրացուցիչ տես ԱՄԿ 182 և 138 կոնվենցիաները)
- արգելվում է հարվածել կամ մարմնական պատիժ կիրառել երեխայի նկատմամբ, երբ վերջինս գտնվում է ՎՎ-ի խնամքի տակ, կամ ՎՎ-ի աշխատողը կատարում է ՎՎ-ի աշխատանք
- արգելվում է մենակ երեխային նստեցնել մեքենա ՎՎ-ի աշխատանքի համար, եթե դա ծայրահեղ անհրաժեշտությամբ չի պայմանավորված, կամ չկա ծնողի/խնամակալի և ղեկավարի թույլտվությունը
- պետք է նրբանկատ լինել երեխաների հետ հարաբերություններում, գործողություններում և խոսքի ընկալման և կիրառման հարցում, Ձեր դրսևորած վարվելակերպում պետք է առկա լինի հարգանք երեխաների և նրանց իրավունքների նկատմամբ
- պետք է հետևել, որ երեխաների հետ ցանկացած ֆիզիկական շփումը հարիր լինի տվյալ վայրի մտածելակերպին
- պետք է կիրառել դրական, ոչ բռնի մեթոդներ երեխաների վարվեցողությունը կառավարելու գործում
- պետք է որպես կազմակերպության ներկայացուցիչ ստանձնել պատասխանատվություն անձնական վարվելակերպի և գործողությունների համար
- պետք է միշտ հաշվետու լինել երեխայի դրսևորած պահվածքի նկատմամբ Ձեր ցուցաբերած արձագանքի համար, նույնիսկ եթե երեխան դրսևորում է սեռական անպատշաճ վարքագիծ, չափահաս անձինք պետք է խուսափեն երեխաների հետ հարաբերություններում խոցելի կամ վարկաբեկիչ իրավիճակում հայտնվելուց

- պետք է հնարավորության դեպքում, ՎՎ աշխատանք կատարելիս կիրառել «երկու չափահաս» կանոնը, երբ երկու կամ ավելի չափահաս վերահսկում են երեխաների հետ կատարվող բոլոր գործողությունները, տեսանելի են և ներկա ամբողջ ժամանակ
- պետք է ենթարկվել Երեխաների պաշտպանությանն առնչվող հետաքննությունների պահանջներին (արտաքին և ներքին) և տրամադրել ցանկացած փաստաթուղթ կամ տեղեկատվություն հետաքննությունը ավարտին հասցնելու համար:

Ի լրումն, սույնով, ես հայտարարում և հաստատում եմ, որ հասկանում եմ և կհետևեմ ներքոհիշյալ «Հաղորդակցության Ժամանակ Վնասի Գանխարգելման» դրույթներին.

- Սոցիալական ցանցերում կամ թվային տեխնոլոգիաներում տեղադրված նյութերում չպետք է լինի երեխայի ազգանունը, հովանավորության նույնականացման համարը կամ երեխայի գտնվելու վայրը կամ հասցեն
- Եթե նյութը պարունակում է երեխայի անունը, ապա այն չպետք է իսկական վայրը նշող աշխարհագրական պիտակ ունենա: Ընդունելի այլընտրանք կարող է լինել երեխայի անունը պարունակող նկարի վերապիտակավորումը միայն ըստ SQT գրասենյակի գտնվելու վայրի
- Երեխայի անձնական տվյալները, որոնք ձեռք են բերվում, պահվում կամ ուղարկվում էլեկտրոնային, համացանցի կամ շարժական կապի միջոցներով, գաղտնաբառով պաշտպանվում են
- Ըստ հնարավորության, համապատասխան քայլեր պետք է ձեռնարկվեն՝ կանխարգելելու լուսանկարների էլեկտրոնային պատճենահանումը (օգտագործելով թվային ջրանշանի և մկնիկի աջակողմյան կոճակի սեղման արգելափակման միջոցները՝ համապատասխան ՎՎ-ի գործընկերային նվազագույն չափանիշներին, որոնք վերաբերում են համացանցում ներկա լինելուն)
- ՎՎ-ն չի խրախուսում ուղղակի, չօժանդակված, չհիմնավորված հաղորդակցությունը սոցիալական ցանցերում առանց ՎՎ-ի իմացության հետևյալ կողմերի միջև. հովանավոր/ դոնոր/ այցելու և գրանցված ու չգրանցված երեխաներ, նաև անձնակազմի, կամավորների, ՎՎ այլ անձանց ու գրանցված և չգրանցված երեխաների միջև
- ՎՎ-ն տրամադրում է զեկուցելու եւ արձագանքելու հնարավորություններ, որպեսզի հովանավորները, դոնորները, այցելուները, երեխաները կամ նրանց խնամակալները կարողանան զեկուցել յուրաքանչյուր միջադեպ, երբ կողմերից յուրաքանչյուրը վտանգված կամ անհարմար վիճակում է հայտնվել
- Հովանավորչական բրոջուրները, ՎՎ-ի կայք էջերը, տիրույթները եւ սոցիալական ցանցերի համառոտ բնութագրերը պարունակում են անձնական և գաղտնիության իրավական հրաժարման հայտարարագիր, որը տալիս է երեխաների պաշտպանությանն առնչությամբ միջադեպեր և մտավախություններ զեկուցելու հնարավորություն

Մտորագրություն

Երեխաների պաշտպանության կանոնակարգը

Վորլդ Վիժնի Հարավային Կովկասի գրասենյակի (ՀԿ) Երեխաների պաշտպանության (ԵՊ) կանոնակարգը մշակվել է Գործընկերության Երեխաների բարեկեցության ոլորտի գործառույթների կիրառումն ուղղորդելու նպատակով: ԵՊ կանոնակարգի շրջանակներում ՎՎ ՀԿ-ն կանխարգելում և արձագանքում է երեխաների շահագործմանը, անտեսմանը, և բռնության այլ տեսակներին: Իր գործընկերների հետ միասին, ՎՎ ՀԿ-ն խթանում է ընտանիքում և համայնքում երեխաների շահագործման, վնասակար սովորությունների և բռնության դրսևորումների կանխարգելումը; համայնքներում ռիսկային իրավիճակներում ապրող երեխաների պաշտպանությունը; և բռնության, անտեսման կամ շահագործման ենթարկված երեխաների վերականգնումը: ԵՊ կանոնակարգի նպատակն է հնարավորություն տալ Վորլդ Վիժն ՀԿ-ին անտվանգ վայր դառնալ երեխաների համար, և ամեն ջանք գործադրել երեխաներին զերծ պահելու աշխատակազմի, կամավորների, հովանավորների, գործընկերների և Վորլդ Վիժնի հետ կապակցված այլ անձանց կողմից բռնությունների ենթարկվելու հնարավորությունից:

ՎՎ Գործընկերության համընդհանուր սոցիալական մեղայի մասին կանոնակարգ

Կանոնակարգը վերաբերվում է գործնական կամ անձնական նպատակներով սոցիալական լրատվամիջոցների ցանկացած ձևերի օգտագործմանը, անկախ մուտքի համար օգտագործվող սարքավորումից, եթե այդ օգտագործման ընթացքում ակնհայտ է կամ հեշտությամբ հաստատելի կապը Վորլդ Վիժնի հետ, վտանգի է ենթարկվում Վորլդ Վիժնի մտավոր սեփականությունը, և/կամ այդ օգտագործումն իրականացվում է «աշխատանքային ժամերի» ընթացքում կամ դրանցից դուրս:

Շահերի բախման մասին կանոնակարգը

Կանոնակարգի նպատակն է ընդհանուր ուղենիշներ սահմանել ՎՎ-ում, ինչպես նաև Հարավային Կովկասի տարածաշրջանում տեղակայված ցանկացած Երկրի Գրասենյակում (ԵԳ) շահերի բախման դեպքերի բացահայտման և լուծման համար: Կանոնակարգը վերաբերվում է ԵԳ-երի բոլոր աշխատակիցներին, առանձին կապալառուներին, պրակտիկանտներին, կամավորներին և ԵԳ-ի կողմից ներգրավված այլ անձանց:

Գաղտնիության մասին կանոնակարգը

Կանոնակարգի նպատակն է սահմանել և նախանշել Վորլդ Վիժնի (ՎՎ) քաղաքականությունը ընկերությանը և աշխատակիցներին վերաբերվող տեղեկությունների գաղտնիության վերաբերյալ: ԵԳ բոլոր աշխատակիցները պարտավոր են խստորեն պահպանել բոլոր տեղեկությունների, ծրագրերի, պրակտիկաների, հաճախորդների կոնտակտային տվյալների և հավանական հաճախորդների մասին տվյալների գաղտնիությունը, ինչպես նաև հաստատում են, որ չեն հաղորդի, բացահայտի, հրապարակի կամ այլ կերպ ուղղակիորեն կամ անուղղակիորեն չարաշահի նման գաղտնի և/կամ զգայուն տեղեկությունները ՎՎ-ի և/կամ ԵԳ գործունեության օրինական նպատակներից տարբերվող նպատակներով: Աշխատակիցները նաև համաձայնում են նման տեղեկությունները պահել միայն ՎՎ/ԵԳ սեփականություն հանդիսացող գործիքների վրա, օրինակ՝ ՎՎ համակարգիչների, սերվերների և այլն, և չօգտագործել իրենց սեփական գործիքներն այդ նպատակի համար:

Հակակոռուպցիոն ընթացակարգ

Կանոնակարգն ուղղված է խթանելու Գործընկերության առկա քաղաքականությունները և ստանդարտները (ինչպես օրինակ՝ Վարքի կանոնները), և ամրապնդելու Վորլդ Վիժնի ձգտումը ձևավորել կազմակերպական այնպիսի մշակույթ, որում կոռուպցիան երբեք չի կարող ընդունելի լինել: Այն հստակեցնում է կոռուպցիայի կանխարգելմանն ուղղված վարքի ստանդարտները, և ընդհանուր հիմք ստեղծում ողջ Գործընկերության շրջանակում Վորլդ Վիժնի կոռուպցիոն ռիսկերի կառավարման համար անհրաժեշտ ընթացակարգերի մշակման համար:

Չանցանքների մասին հաղորդումների հավաքման գործընթացի կառավարման Կանոնակարգը

Կանոնակարգի նպատակն է նախանշել և սահմանել Վորլդ Վիժնի քաղաքականությունը գաղտնի կերպով հաղորդված այն «զանցանքների» հետաքննման վերաբերյալ, որոնք թույլ են տրվել Վորլդ Վիժնի (ՎՎ), նրա ղեկավարության կամ գործակալների կողմից: Վորլդ Վիժնի Գործընկերության Վարքի Կանոնների ուղեցույցում սահմանվում է այն գլխավոր սկզբունքը, որ ՎՎ-ն խրախուսում է Գործընկերության բոլոր աշխատակիցներին հաղորդել զանցանքների վերաբերյալ իրենց ունեցած տեղեկությունները, և որ այդ անելու արդյունքում նրանք չպետք է հաշվեհարդարի ենթարկվեն:

Տեղեկատվական անվտանգության մասին կանոնակարգ

Այս կանոնակարգի կիզակետում են ՎՎ Հարավային Կովկասի ենթատարածաշրջանում տեղակայված Երկրների գրասենյակների տեղեկատվական անվտանգության գործառույթները և խնդիրները: Տեղեկատվական անվտանգությունն ապահովում է ՎՎ կարևորագույն և զգայուն տեղեկությունների պաշտպանվածությունը

չարտոնված օգտագործողների կողմից բացահայտման վտանգից (գաղտնիություն), պաշտպանում է տեղեկությունների անպատշաճ ձևափոխություններից (ազնվություն), և խթանում է տեղեկությունների ժամանակին և հուսալի հասանելիությունը և օգտագործումը (մատչելիություն):


Գործընկերության Վարքագծի կանոնների ուղեցույց

Փաստաթղթի նպատակն է ՎՎ Հարավային Կովկասի տարածաշրջանի Երկրի գրասենյակների աշխատակիցներին ուղղորդել դեպի այն լավագույն վարքաձևերը, որոնք խթանում են ՎՎ-ի գործունեության արդյունավետությունը, միաժամանակ հարգելով այլոց կարիքները: Այն ուղղված է խթանելու ընդհանուր ընկալումն այն մասին, թե որոնք են Վորլդ Վիժնի կորպորատիվ մշակույթի շրջանակներում համընդհանուր ընդունելի և պատշաճ վարքաձևերը, և նպատակ չունի վերահսկելու աշխատակիցներին, չնայած կարող է նաև հիմք հանդիսանալ կարգապահական գործողությունների համար:

Գործընկերության կանոնակարգը ոտնձգությունների կանխարգելման մասին

Կանոնակարգի նպատակն է նախանշել և սահմանել աշխատավայրում ոտնձգությունների կանխարգելման վերաբերյալ Վորլդ Վիժնի գլոբալ քաղաքականությունը, որը տարածվում է Հարավային Կովկասի ենթատարածաշրջանի բոլոր գրասենյակների վրա: Վորլդ Վիժնը (ՎՎ) ջանում է խթանել արժանապատվության, հարգանքի և բարյացակամության գլոբալ մշակույթ, որը համահունչ կլինի ՎՎ-ի «Մենք արժևորում ենք մարդկանց» Հիմնարար արժեքին: Այս հայեցակարգի շրջանակներում, ՎՎ ՀԿ գրասենյակները պետք է ձգտեն ապահովել խտրականությունից* զերծ աշխատանքային միջավայր, և պետք է արգելեն ցանկացած ոտնձգություններ, ներառյալ սեռական բնույթի ոտնձգությունները, ինչպես նաև ռասայի, մաշկի գույնի, ազգության, տարիքի, սեռի, հաշմանդամության կամ ցանկացած այլ ապօրինի կամ անպատշաճ հիմքով կատարվող ոտնձգությունները: ՎՎ-ն նաև կարևորում է համապատասխանությունն իր ծրագրերի համայնքներում գործող տեղական օրենքներին, և ակնկալում է ՀԿ Երկրի գրասենյակների իր աշխատակիցներից գործել ոտնձգություններին վերաբերվող այդ օրենքների շրջանակներում:


Վտորագրություն





World Vision
Armenia

ՀԱՄԱՉԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՏ
ՎՎ ՀԱՅԱՍՏԱՆԲ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐՆ

WV ARMENIA POLICIES
STATEMENT OF ACKNOWLEDGEMENT

Իմ ստորագրությամբ հաստատում եմ, որ ծանոթ եմ և տեղեկացված Վորլդ Վիժն Հայաստանի ստորև նշված կանոնակարգերին և համաձայն եմ դրանց հետ:

With my signature below I confirm that I am acquainted with the content of World Vision Armenia Compliance Policies mentioned below and I agree with all its statements.

- Child Protection Policy/Երեխաների պաշտպանության կանոնակարգ
- Code of Conduct Policy/Վարքագծի կանոնակարգ
- Anti-Corruption Policy/Հակակոռուպցիոն ընթացակարգ
- Harassment Prevention/Ոստնվարդությունների կանխարգելման կանոնակարգ
- Whistleblower Management Policy/Կազմակերպության դեմ բողոքների պատճառները կանխարգելելու վերաբերյալ կանոնակարգ
- Conflict of Interest/Շահերի բախման մասին կանոնակարգ
- Global Social Media Policy/Սոցիալական մեդիայի համընդհանուր կանոնակարգ
- Confidentiality Policy/Գաղտնիության պահպանման մասին կանոնակարգ
- Information security: Internet, e-mail usage/Տեղեկատվության անվտանգության ապահովում. Համացանցի, էլեկտրոնային փոստի օգտագործում

Գրեկ Կարամյան
Անուն Ազգանուն/ Name

[Signature]
ստորագրություն /signature

« 201-- »
ամսաթիվ/ Date

Please mention Your relation with WVA (Donor, sponsor, visitor, volunteer, intern, individual contractor, other)
Խնդրում ենք նշել Ձեր առնչությունը ՎՎ-ին (դոնոր, հովանավոր, այցելու, կամավոր, ինտերն, անհատ կապալառու, այլ)

